# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 21-Ա

### ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է.

Հաստատել 28 փետրվարի 2019թ. թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ խմբագրությամբ:

## ՈՐՈՇՈՒՄ

Օրակարգ.

1. Աչաջուրի համայնքապետի 2018թ. տարեկան հաշվետվությունը քննարկելու մասին:
2. 2018թ. ընթացքում Աչաջուր համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը քննարկելու մասին:
3. Աչաջուր համայնքի 2019թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
4. Աչաջուր համայնքի անդամ Զավեն Մնացականյանին դրամական օգնություն տրամադրելու մասին:
5. Աչաջուր համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Յուրիկ Մելիքջանյանի կողմից նախկինում ձեռք բերված կիսակառույց շինության նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունք ճանաչելու և շինության զբաղեցրած 0,0034 հա հողամասը, ծածկագիր՝ 11-013- 045-005, ուղղակի վաճառքի տեսքով օտարելու մասին:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | | | |
| 4. Վեներա Վարդապետյան | | | |
| 5. Անուշ Վարդումյան | | | |

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 22-Ն

### ԱՉԱՋՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ 2018Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է.

## ՈՐՈՇՈՒՄ

Հաստատել Աչաջուր համայնքի ղեկավարի 2018 թ. ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունը՝ համաձայն կից ներկայացվող 1-3 հավելվածների:

Կցվում է հավելվածը

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | [signature] | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | [signature] | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | [signature] | | |
| 4. Վեներա Վարդապետյան | [signature] | | |
| 5. Անուշ Վարդումյան | [signature] | | |

Աչաջուրի համայնքապետ [signature] Կարեն Ղալթախչյան

Հավելված 1
Աշոցքի համայնքի ավագանու
28.02.2019թ. թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 22-Ն որոշման

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| Տողի NN | Եկամտատեսակները | Ընդամենը տարեկան | փաստացի | կատ. % -ը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 4 | 5 | 6 | |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | **105923,8** | **101777,4** | **96,1** | |
| | այդ թվում | | | | |
| 1100 | **1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **24880,0** | **20433,3** | **82,1** | |
| | այդ թվում` | | | | |
| 1110 | **1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից** | **11700,0** | **9025,6** | **77,1** | |
| | այդ թվում` | | | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 400,0 | 348,9 | 87,2% | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 11300,0 | 8676,7 | 76,8 | |
| 1120 | **1.2 Գույքային հարկեր այլ գույքից** | **12000,0** | **10626,7** | **88,6** | |
| | այդ թվում` | | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 12000,0 | 10626,7 | 88,6 | |
| 1130 | **1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **1180,0** | **781,0** | **66,2** | |
| | այդ թվում` | | | | |
| 1131 | Տեղական տուրքեր | **1180,0** | **781,0** | **66,2** | |
| 1200 | **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **74493,8** | **74393,8** | **100,0** | |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 72060,1 | 72060,1 | 100,0 | |
| 1257 | գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2333,7 | 2333,7 | 100,0 | |
| 1300 | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **6650,0** | **6950,3** | **104,5** | |
| 1330 | **3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **1500,0** | **845,1** | **56,3** | |
| | այդ թվում` | | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | 1500,0 | 797,1 | 53,1 | |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 0,0 | 48,0 | 0,0 | |
| 1351 | Տեղական վճարներ | 5150,0 | 5805,2 | 112,7 | |
| 1390 | **3.9 Այլ եկամուտներ** | **0,0** | **300,0** | **0,0** | |
| | այդ թվում` | | | | |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 0,0 | 300,0 | 0,0 | |

Հավելված 2
Ալաջուր համայնքի ավագանու
28.02.2019թ. թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 22-Ն որոշման

## ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Բա-ժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան ճշտված պլան | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե | Փաստացի | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 6 | 7 | 8 |
| x | x | x | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 106646,1 | 105923,8 | 722,3 | 101823,7 | 101239,9 | 583,8 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 50576,1 | 49053,8 | 1522,3 | 48615,6 | 47401,8 | 1213,8 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 50576,1 | 49053,8 | 1522,3 | 48615,6 | 47401,8 | 1213,8 |
| 04 | 2 | 0 | *Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն* | 200,0 | 0,0 | 200,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 200,0 | 0,0 | 200,0 | 200,0 | 0,0 | 200,0 |
| 04 | 9 | 0 | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | -5000,0 | 0,0 | -5000,0 | -3856,9 | 0,0 | -3856,9 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | -5000,0 | | -5000,0 | -3856,9 | 0,0 | -3856,9 |
| 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 3470,0 | 3470,0 | 0,0 | 3025,6 | 3025,6 | 0,0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 05 | 1 | 0 | *Աղբահանում* | 3470,0 | 3470,0 | 0,0 | 3025,6 | 3025,6 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 3470,0 | 3470,0 | 0,0 | 3025,6 | 3025,6 | |
| 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 8030,0 | 4030,0 | 4000,0 | 7224,3 | 2997,3 | 3227,0 |
| 06 | 2 | 0 | *Համայնքային զարգացում* | 5800,0 | 2800,0 | 3000,0 | 5537,3 | 2703,0 | 2834,3 |
| | | | որից՝ | | | | | | |
| 06 | 2 | 1 | Համայնքային զարգացում | 5800,0 | 2800,0 | 3000,0 | 5537,3 | 2703,0 | 2834,3 |
| 06 | 3 | 0 | *Ջրամատակարարում* | 1230,0 | 1230,0 | 0,0 | 294,3 | 294,3 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 06 | 3 | 1 | Ջրամատակարարում | 1230,0 | 1230,0 | 0,0 | 294,3 | 294,3 | 0,0 |
| 06 | 4 | 0 | *Փողոցների լուսավորում* | 1000,0 | 0,0 | 1000,0 | 1000,0 | 0,0 | 392,7 |
| | | | որից՝ | | | | | | |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 1000,0 | 0,0 | 1000,0 | 392,7 | 0,0 | 392,7 |
| **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | **10500,0** | **10500,0** | **0,0** | **10129,0** | **10129,0** | **0,0** |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ* | 10500,0 | 10500,0 | 0,0 | 10129,0 | 10129,0 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 10500,0 | 10500,0 | | 10129,0 | 10129,0 | |
| **09** | **0** | **0** | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | **37000,0** | **37000,0** | **0,0** | **36816,2** | **36816,2** | **0,0** |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| **09** | **1** | **0** | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | 23000,0 | 23000,0 | 0,0 | 22816,2 | 22816,2 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 23000,0 | 23000,0 | 0,0 | 22816,2 | 22816,2 | 0,0 |
| **09** | **5** | **0** | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | 14000,0 | 14000,0 | 0,0 | 14000,0 | 14000,0 | 0,0 |
| 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 14000,0 | 14000,0 | | 14000,0 | 14000,0 | |
| **10** | **0** | **0** | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **870,0** | **870,0** | **0,0** | **870,0** | **870,0** | **0,0** |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 10 | 9 | 1 | Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 870,0 | 870,0 | | 870,0 | 870,0 | |
| **11** | **0** | **0** | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | **1000,0** | **1000,0** | **0,0** | **0,0** | **0,0** | **0,0** |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | 1000,0 | 1000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 1000,0 | 1000,0 | | 0,0 | 0,0 | |

Հավելված 3
Աշոցք համայնքի ավագանու
28.02.2019թ. թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 22-Ն որոշման

## ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Տարեկան ճշտված պլան | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե | Փաստացի | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **106646,1** | **105923,8** | **722,3** | **101823,7** | **101239,9** | **583,8** |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ | x | 105923,8 | 105923,8 | 0,0 | 101239,9 | 101239,9 | 0,0 |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 4100 | 1.1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ | x | 39500,0 | 39500,0 | 0,0 | 39312,5 | 39312,5 | 0,0 |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | **4111** | 39000,0 | 39000,0 | X | 39000,0 | 39000,0 | X |
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | **4112** | 500,0 | 500,0 | X | 312,5 | 312,5 | X |
| 4200 | 1.2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | x | **16723,8** | **16723,8** | **X** | **13782,2** | **13782,2** | **X** |
| | որից՝ | | | | | | | |
| 4212 | *-Էներգետիկ ծառայություններ* | **4212** | 1015,0 | 1015,0 | X | 1014,4 | 1014,4 | X |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | **4213** | 4400,0 | 4400,0 | X | 3252,9 | 3252,9 | X |
| 4214 | -Կապի ծառայություններ | **4214** | 450,0 | 450,0 | X | 303,4 | 303,4 | X |
| 4216 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | **4216** | 2153,7 | 2153,7 | X | 1730,0 | 1730,0 | X |
| 4220 | *ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող4221+տող4222+տող4223)* | x | 350,0 | 350,0 | X | 169,5 | 169,5 | X |
| | որից՝ | | | | | | | |
| 4221 | -Ներքին գործուղումներ | **4221** | 350,0 | 350,0 | X | 169,5 | 169,5 | X |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4230 | *ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* | x | 1690,1 | 1690,1 | X | 1327,4 | 1327,4 | X |
| | որից՝ | | | | | | | |
| 4232 | -Համակարգչային ծառայություններ | **4232** | 200,0 | 200,0 | X | 198,8 | 198,8 | X |
| 4233 | -Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | **4233** | 100,0 | 100,0 | X | 0,0 | 0,0 | X |
| 4234 | -Տեղակատվական ծառայություններ | **4234** | 30,0 | 30,0 | X | 0,0 | 0,0 | X |
| 4237 | -Ներկայացուցչական ծախսեր | **4237** | 800,0 | 800,0 | X | 705,0 | 705,0 | X |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | **4239** | 560,1 | 560,1 | X | 423,6 | 423,6 | X |
| 4240 | *ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* | x | 200,0 | 200,0 | X | 0,0 | 0,0 | X |
| | որից՝ | | | | | | | |
| 4241 | -Մասնագիտական ծառայություններ | **4241** | 200,0 | 200,0 | X | 0,0 | 0,0 | X |
| 4250 | *ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)* | x | 2700,0 | 2700,0 | X | 2331,1 | 2331,1 | X |
| | որից՝ | | | | | | | |
| 4251 | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | **4251** | 2500,0 | 2500,0 | X | 2331,1 | 2331,1 | X |
| 4252 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | **4252** | 200,0 | 200,0 | X | 0,0 | 0,0 | X |
| 4260 | *ՆՅՈՒԹԵՐ* | x | 3765,0 | 3765,0 | X | 3653,5 | 3653,5 | X |
| | որից՝ | | | | | | | |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | **4261** | 385,0 | 385,0 | X | 365,0 | 365,0 | X |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | **4264** | 1000,0 | 1000,0 | X | 1000,0 | 1000,0 | X |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | **4269** | 2180,0 | 2180,0 | X | 2179,9 | 2179,9 | X |
| 4400 | 1.4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ | x | **47500,0** | **47500,0** | **X** | **46945,2** | **46945,2** | **X** |
| | որից՝ | | | | | | | |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | **4511** | 47500,0 | 47500,0 | X | 46945,2 | 46945,2 | X |
| 4600 | *1.6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4610+տող4630+տող4640)* | x | **870,0** | **870,0** | **X** | **870,0** | **870,0** | **X** |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | **4729** | 870,0 | 870,0 | X | 870,0 | 870,0 | X |
| 4700 | *1.7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ* | x | **1330,0** | **1330,0** | **0,0** | **330,0** | **330,0** | **0,0** |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 4710 | *ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ* | x | 330,0 | 330,0 | X | 330,0 | 330,0 | X |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | որից` | | | | | | | |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 330,0 | 330,0 | X | 330,0 | 330,0 | X |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771)* | x | 1000,0 | 1000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | որից` | | | | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 1000,0 | 1000,0 | | 0,0 | 0,0 | |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | **5722,3** | **X** | **5722,3** | **4440,7** | **X** | **4440,7** |
| | այդ թվում` | | | | | | | |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 5722,3 | X | 5722,3 | 4440,8 | X | 4440,8 |
| | այդ թվում` | | | | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 4000,0 | | 4000,0 | 3227,0 | | 3227,0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների շինարարություն | 5112 | 4000,0 | X | 4000,0 | 3227,0 | X | 3227,0 |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* | x | 1522,3 | | 1522,3 | 1213,8 | | 1213,8 |
| | որից` | | | | | | | |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 1522,3 | X | 1522,3 | 1213,8 | X | 1213,8 |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | 200,0 | | 200,0 | 0,0 | | 0,0 |
| | որից` | | | | | | | |
| 5133 | - Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 5133 | 200,0 | | 200,0 | 0,0 | | 0,0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 0,0 | | 0,0 | 0,0 | | 0,0 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | x | **-5000,0** | X | **-5000,0** | **-3856,9** | X | **-3856,9** |
| 6130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ* | 8131 | 0,0 | X | 0,0 | -94,5 | X | -94,5 |
| 6400 | 1.4. ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ` (տող6410+տող6420+տող6430+տող6440) | x | -5000,0 | X | 0,0 | -3762,4 | X | 0,0 |
| | այդ թվում` | | | | | | | |
| 6410 | *ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ* | 8411 | -5000,0 | X | -5000,0 | -3762,4 | X | -3762,4 |

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

## 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 23-Ն

### 2018Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով **ավագանին որոշում է.**

ՈՐՈՇՈՒՄ

Տալ համաձայնություն համայնքապետի առաջարկությանը հաստատել 2018թ. ընթացքում Աչաջուր համայքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համաձայն կից ներկայացվող հավելվածի:

Կցվում է հավելվածը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | | | |
| 4. Վեներա Վարդապետյան | | | |
| 5. Անուշ Վարդումյան | | | |

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան

Հավելված
Աչաջուր համայնքի ավագանու
28.02.2019թ. թիվ 3 արտահերթ նիստի
թիվ 23-Ն որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2018 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018–2022 ԹԹ. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աչաջուր համայնքի զարգացման 2018–2022 թթ. հնգամյա ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու 2018 թ. փետրվարի 28-ի թիվ 3 արտահերթ նիստի թիվ 22-Ն որոշմամբ:

Համայնքի զարգացման գերակա ուղղություններն են. տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը. որակյալ և հարմարավետ նախադպրոցական հաստատությունների համակարգի կայացումը, աղբահանության, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման ոլորտներում իրական բարեփոխումների ծրագրերի արդյունավետ իրականացումը, հասարակության մշակութային մակարդակի բարձրացումը և ազգային մշակութային ավանդույթների պահպանումը, քաղաքաշինական ոլորտում գործարար ակտիվության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, զբոսաշրջության, սպորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

2018 թ. ընթացքում համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Նախադպրոցական հաստատություն. - Համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել են մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի, էլեկտրահաղորդման գծերի վերանորոգման, շքամուտքի ծածկի կառուցման աշխատանքներ՝ 1.4 մլն. դրամի չափով:
2. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում. – Կատարվել են ներհամայնքային փողոցների հարթեցման, խճապատման աշխատանքներ. Վերանորոգվել է դաշտային ճանապարհների 3 հատվածը՝ մոտ 7 կմ երկարությամբ: Դպրոցամերձ տարածքում համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է հարմարավետ ասֆալտապատ ավտոկայանատեղի, վերանորոգվել են կից մայթը և ցանկապատը: Համայնքի կենտրոնական փողոցում կառուցվել են թվով 8 ասֆալտե արգելափակոցներ: Համայնքի ներդրումը կազմել 3.3 մլն. դրամ:

3. Արտաքին լուսավորության ցանցի կառուցում. – Համայնքի առավել բանուկ փողոցներում կառուցվել է մոտ 8 կմ արտաքին լուսավորության արդիականացված և էներգախնայող ցանց: Համայնքը կատարել է մոտ 400.0 հազ. դրամի ներդրում: 600.0 հազ. դրամ ներդրվել է բարերարների միջոցներով:
4. Համայնքի տարբեր թաղամասերում բարերարների միջոցներով տեղադրվել է 20 նստարան: Ներդրումը կազմել է 2.0 մլն. դրամ:
5. Ջրամատակարարում. - Համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել են խմելու ջրագծերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: 2019 թ. պետական բյուջեի միջոցներով նախատեսված են 20.0 մլն. դրամի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրի իրականացման հետ կապված արդեն իսկ կատարվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման համար պահանջվող համայնքի ներդրումը՝ 1.0 մլն. դրամի չափով:
6. Աղբահանում և սանիտարական մաքրում. - 2018 թ. աղբահանման և սան. մաքրման աշխատանքների կազմակերպման համար համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 3.0 մլն. դրամ: Կարգավորվել են աղբի հավաքման և հեռացման աշխատանքները, որոնք իրականացվում են շաբաթական երկօրյա գրաֆիկով: Համայնքի տարբեր թաղամասերում տեղադրվել են 10 փոքր աղբամաններ:

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 24-Ն

### ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը **ավագանին որոշում է.**

## ՈՐՈՇՈՒՄ

Աչաջուր համայնքի 2018թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Համայնքի բյուջեի եկամտային մասն ավելացնել 950.0 հազ. դրամով, որից՝

   ա/ գյուղատնտեսական նշանակության հողի հարկ – 300.0 հազ. դրամ,

   բ/ գույքահարկ փոխադրամիջոցների համար – 500.0 հազ. դրամ,

   գ/ համայնքային սեփականության հողերի վարձավճար – 150.0 հազ. դրամ:

2. Համայնքի բյուջեի ծախսային մասն ավելացնել 950.0 հազ. դրամով, որից՝

   ա/ ծախսերի գործառնական դասակարգման 06 – 2 – 1՝ «Համայնքային զարգացում» բաժնի 4251՝ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով – 750.0 հազ. դրամ,

   բ/ ծախսերի գործառնական դասակարգման 10-9-1 «Սոցիալական պաշտպանություն» բաժնի 4729՝ «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով – 200.0 հազ. դրամ

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | [signature] | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | [signature] | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | [signature] | | |
| 4. Վեներա Վարդապետյան | [signature] | | |
| 5. Անուշ Վարդումյան | [signature] | | |

Աչաջուրի համայնքապետ [signature] Կարեն Ղալթախչյան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 25-Ա

## ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄ ՋԱՎԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, կետերի պահանջներով հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ

Տալ համաձայնություն համայնքապետի առաջարկությանը Աչաջուր համայնքի անդամ Ջավեն Մնացականյանին տրամադրել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ օգնություն սրտի բարդ վիրահատության ծախսերը մասնակի հատուցելու նպատակով:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | [signature] | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | [signature] | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | [signature] | | |
| 4. Վեներա Վարդապետյան | [signature] | | |
| 5. Անուշ Վարդումյան | [signature] | | |

Աչաջուրի համայնքապետ [signature, stamp] Կարեն Ղալթախչյան

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն 4006 Տավուշի մարզ, գ. Աչաջուր հրապարակի 4, էլ. փոստ achajur.tavush@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
## 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 26-Ա

### ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՅՈՒՐԻԿ ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0,0034 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ, ԾԱԾԿԱԳԻՐ՝ 11-013- 045-005, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՏԵՍՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, «Հողային օրենսգիրք» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի, ՀՀ Կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը ավագանին որոշում է.

## ՈՐՈՇՈՒՄ

Տալ համաձայնություն համայնքապետի առաջարկությանը

1. Աչաջուր համայնքի վարչական սահմաններում գտնվող 11-013-045-005 ծածկագրում ներառված 0,0034 հա հողամասի վրա կառուցված, 34 քմ արտաքին չափերով շինության նկատմամբ ճանաչել քաղաքացի Յուրիկ Մելիքջանյանի սեփականության իրավունքը:
2. Շինության սպասարկման համար նախատեսված 0,0034 հա ծածկագիր՝ 11-013- 045-005 հողամասը ուղղակի վաճառքի տեսքով 1 քմ 222 դրամ, ընդամենը 7 600 (յոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Յուրիկ Մելիքջանյանին:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Անդրանիկ Ղալթախչյան | | | |
| 2. Արարատ Մելիքբեկյան | | | |
| 3. Կորյուն Վարդապետյան | | | |
| 4. Վեներա Վարդապետյան | | | |
| 5. Անուշ Վարդումյան | | | |

Աչաջուրի համայնքապետ Կարեն Ղալթախչյան